ԳՐԿԶԻ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

Հրաշափառ Ս. Հարության տոնին հանելով բնդունիլ Հարավային Ամերիկայի բեմին պատվարժան վարչությանց, եկեղեցական դասուն, հավատացյալ ժողովուրդին և մեր սրտագին մաղթանքները Ձեր կենաց և Մայր Աթոռ պայծառության համար:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ՝
ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

Բաքվի հայոց եկեղեցու բեմական խորհրդի, համայնքի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ և միաբանությանը Ս. Զատկի տոնի առթիվ: Թո՛ղ մարդկանց սրտերում արմատավորվի հարուցյալ Քրիստոսի սիրո և եղբայրության ոգին: Խաղաղությո՛ւն բոլորին, խաղաղությո՛ւն ողջ աշխարհին:

Ադրբեջանի եվ Թուրքեստանի հայոց առաջնորդ՝
ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

ԲԱՔՈՒ

Ռումանահայ բեմական խորհուրդը և հավատացյալ ժողովուրդը սրտանց կշնորհավորեն Ձեզ Վեհափառությունը Զատկական տոներու առթիվ, կցանկան երկար ու բաջառողջ կյանք՝ ի բարօրություն և անսասանություն Հայաստանյայց Ս. եկեղեցվո և անսասման բարգավաճում Մայր Հայրենիքի:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԵՆԱՐԵՍՏ

Քրիստոսի հրաշափառ Հարության տոնին առթիվ բնդունելով մեր որդիական հարգալից ողջույններն ու սրտաբուխ աղոթքը Մայր Աթոռ անսասանության և Ձեր արեշատության համար:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՖԻԱ

Որդիական խորին հարգանք շնորհավորում ենք Ձեզ Վեհափառության Փրկչի Ս. Հարության հրաշափառ տոնը:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԵՀՐԱՆ

Ատրպատականի հայոց բեմական պատգամավորական ժողովը, բեմական խորհուրդը և բահանայից դասը համբուրելով Ձեր Ս. Աջը սրտագին շնորհավորում ենք Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնը, մաղթելով, որ հարուցյալ Փրկիչը իր սիրո, խաղաղության և միասնական ոգին բափե հայ ժողովրդի և Ս. Եկեղեցվո վրա, կազմելով մեկ միություն:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԹԱՎՐԻԶ

Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնին առիթով հանուն գաղութիս մեր սրտագին շնորհավորությունները մատուցանելով կմաղթենք Ձերդ Վեհափառության և Գերագույն Հոգևոր Խորհուրդին երջանիկ և երկար օրեր:

Առաջնորդական տեղապահ՝
ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ԽՈՇՈՐՅԱՆ

ԱՔԵՆՔ

Հանեցեք ընդունիլ մեր ջերմագին մաղթանքները Հիսուս Քրիստոսի Հարության տոնին առթիվ, մաղթելով խաղաղություն համայն աշխարհին և բարգավաճում մեր սիրեցյալ Հայրենիքին, առողջություն և կարողություն Ձերդ Վեհափառության՝ հովվելու Հայաստանյայց Ս. Եկեղեցին և հայ ժողովուրդը:

Համբուրիվ Ս. Աջո Ձերո հայրական՝

ԻԳՆԱՏԻՈՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՔԻԼԻՄԼՅԱՆ

ԲՈՒԵՆԱՐԵՍ

Սրտագին շնորհավորություններ Քրիստոսի Ս. Հարության տոնի առթիվ, մաղթելով Ձեզ երջանիկ և բեղմնավոր կյանք:

Ոդիական համբուրիվ Ս. Աջույդ՝

ՄԱՄԲՐԵ ՔԱՀԱՆԱ ՊԻՊԵՐՅԱՆ

ԲՈՒԵՆԱՐԵՍ

Ս. Զատկի առթիվ սրտագին շնորհավորություն, ջերմ բարեմաղթություն, արհշատություն Ձերդ Վեհափառության, անսասանություն Հայրապետության:

ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ՍՈՖԻԱ

Սրտագին շնորհավորում ենք Վեհափառ Հայրապետի, Գերագույն Հոգևոր Խորհրդի և ամբողջ միաբանության Ս. Զատիկը: Ի սրտե ցանկանում ենք, որ բերե աշխարհին ամրապնդված վերջնական խաղաղություն, աշխարհի բոլոր ժողովուրդների միջև համերաշխություն և Մայր Արոոին ու Մայր Հայրենիքին՝ պայծառություն:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆ

Շնորհավորելով Զատկական մեծ տոնը Ձերդ Վեհափառության մաղթում եմ երկարակեցություն՝ ի բարօրություն Հայոց Եկեղեցու և մեր պանծալի Հայրենիքի:

ՏԱՃԱՏ ՔԱՀԱՆԱ

ԵՐԵՎԱՆ

Շնորհավորում ենք Քրիստոսի Ս. Հարությունը: Մեզ և Ձեզ մեծ ավետիք, և Ձեզ երկար կյանք ի բարօրություն հայ ժողովրդին և եկեղեցուն: Համբուրում ենք Ձեր Ս. Աջը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ,
ՎԱՉԳԵՆ ՔԱՀԱՆԱ

ԿԻՐՈՎԱԿԱՆ

Շնորհավորում ենք Քրիստոսի Հարության տոնը: Համբուրում ենք Ձեր Ս. Աջը: Ցանկանում ենք երկար կյանք և երջանկություն:

ՀՈՒՍԻԿ ՔԱՀԱՆԱ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԴՈՆԻ-ՌՈՍՏՈՎ

Դոնի-Ռոստով քաղաքի հայկական Մայր Տաճարի Եկեղեցական խորհուրդը, հավատացյալ ծխականները և անձամբ ես շնորհավորում ենք Հարությունը Քրիստոսի, որը քարոզում էր սեր և խաղաղություն ամբողջ աշխարհում, սերմանում մեր մեջ այդ զգացմունքները, որոնք ներկայումս մեր կողմից կենսագործվում են երկրագնդի վրա:

Եկեղեցական խորհրդի նախագահ
ԴԵՎՈՐԳ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԴՈՆԻ-ՌՈՍՏՈՎ

Ուրախական ակնածությամբ շնորհավորում եմ Քրիստոսի լուսապայծառ Հարությունը: Անկեղծորեն ցանկանում եմ Ձերդ Սրբության երկարակեցություն՝ ի բարօրություն Հայոց եկեղեցու:

ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԹԱՎԱՐԵԿՅԱՆ

ՍՐՋՈՆԻԿԻԶԵ

Հավատացյալների և եկեղեցական խորհրդի անունից շնորհավորում ենք Քրիստոսի Հարությունը: Ձերդ Սրբությանը ցանկանում ենք առողջություն, բարօրություն և բարի ձեռնարկումներ:

Եկեղեցական խորհրդի նախագահ՝
ԲԵԳԼՅԱՐՈՎ

ՍՐՋՈՆԻԿԻԶԵ